ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 133

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գետահովիտ բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Գետահովիտ բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գետահովիտ բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-022-0113-0072 կադաստրային ծածկագրով 0.2906 հա մակերեսով հողամասից 0.16672 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող	11-022-0113-0072 կադաստրային ծածկագրով 0.2906 հա մակերեսով հողամասից 0.16672 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:
2. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.
   - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված պայմանը (կցվում է),
3. ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Գետահովիտ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Գետահովիտ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, « 29 » «հունիսի» 2022թ